Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԲԱԴԱԼԻ ՍԻՐՏԸ

Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունը[1]:

Շուտ հասավ այս նոր դոկումենտը 70 տարեկան Բադալին:

Բադալը հիվանդ էր, նրան բերել էին Երևան՝ հիվանդանոց, ուր մնաց երկու շաբաթ: Ապաքինվեց թե չէ՝ խելքը-միտքն իրենց գյուղն էր: Շտապում էր, ուզում էր հասնել տուն, մի շաբաթ մնալ և ապա բարձրանալ Արագածի յայլաղը: Բադալին լավ խնամեցին հիվանդանոցում, ապաքինեցին նրան, և ահա օրերը մոտեցան, Բադալը պատրաստվեց:

Մի օր էլ, երբ նրան տեսության եկավ եղբայրը՝ Ավոն, Բադալը ցանկություն հայտնեց, որ իր մոտ կանչի իրենց գյուղացի ուսանող Պետիկին:

— Բան պիտի հարցնեմ:

Մյուս օրը,— դա Բադալի հեռանալու նախընթաց օրն էր— եկավ Պետիկն ամառային հագուստով և նստեց Բադալի կողքին, հիվանդանոցի պարտեզում, նստարանին:

— Է, Բադա՛լ քեռի, հո լավացա՛ր:

— Լավացա՛, Պետիկ ջան, վաղը ճամփորդ եմ:

— Ուժդ տեղն եկա՞վ:

— Հա, տեղն եկավ: Գնամ Արագած՝ ավելի լավ կլինեմ: Գործս հաջող գնաց, լավ կլինի:

Պետիկն սպասում էր, որ քեռի Բադալը պատմի իր սրտի ցանկությունը: Այդպես էր հաղորդել Ավոն, թե Բադալը պիտի պատմի իր սրտի ցանկությունը:

— Պետիկ ջան,— սկսեց Բադալը,— քեզ կանչեցի, որ ինձ մի բան հասկացնես:

— Ասա, Բադալ քեռի:

— Ասեմ, Պետիկ ջան: Դու ինձ մի հասկացրու, թե էս ի՞նչ են ուզում անեն:

— Ո՞րտեղ, հիվանդանոցո՞ւմ:

— Չէ, ի՞նչ հիվանդանոցում,— երկրում: Էս ի՞նչ նոր օրենք է մտնում երկիրը:

— Սահմանադրությո՞ւնը[2]

,— ժպտաց Պետիկը:

— Էդ բառը չհասկացա, բայց էն, որ ամեն բանից վեր է ու ամենքիս օրենքը:

— Էդ վաղուցվա բան է, Բադալ քեռի: Սահմանադրությունն է:

Բադալը հարցականորեն մտիկ տվեց Պետիկին: Իր իմացածը նոր օրերի բան էր:

— Ասածս վերջին ժամանակների բան է:

Պետիկը ժպտաց և մեղմ նայեց Բադալի աչքերի մեջ:

— Դա Գերագույն Խորհրդի ընտրությունների Կանոնադրությունն է, Բադալ քեռի— էդ քեզ ո՞վ ասաց:

— Հիվանդանոցում իմացա: Շատ են խոսում, Պետիկ ջան, լավ չեմ հասկանում: Հասկացրու, մի լավ իմանամ՝ ինչ բան է, Հետո գնամ գյուղ:

Ահա թե ինչ էր ուզում տանել քաղաքից Բադալը:

Պետիկը պատմեց:

Պատմեց, բայց նախ այնքան հեշտ չեղավ այդ պատմելը,— ստիպված եղավ գրպանից հանելու թերթը և կարդալու որոշ տողեր: …Եվ ապա, սա էր կարևորը— դոկումենտը խորացավ լցվեց այնպիսի նոր իմաստներով ու մտքերով, որ առաջ չէր տեսել, չէր մտածել ինքը՝ Պետիկը: Ի՞նչ էր պատճառը: Արդյոք դա բացատրողի դերն էր, որ ստիպում է մարդուն ավելի լարվել, ավելի լավ հասկանալ՝ հասկացնելու համար, թե՞ ուրիշ բան:

Այո, ուրիշ բան: Դա Բադալն էր, որ խորասույզ լարված, աչքերը լայն բացած նայում էր գետնին և մտածում: Պետիկը տեղ-տեղ կարդում էր և կարդացածը բացատրում: Բադալը Պետիկի ասածի միտքը ձեռաց վերածում էր պարզ արտահայտության:

— Ծերերն էլ կարող են ընտրել, էդպես չի՞,— հարցրեց Բադալը:

— Էդպե՛ս է, Բադա՛լ քեռի:

— Ո՛ւմ ուզենամ կընտրե՞մ:

— Ո՛ւմ ուզենաս:

— Ես է՞լ կարող եմ ընտրվել:

— Կարող ես, Բադալ քեռի:

Բադալի մտքերը հրահրվեցին: Մտածեց, մտածեց, արդյոք չկա՞ մի պակաս բան նոր օրենքի մեջ:

— Լավ, եթե ես գյուղում լինեմ ու չկարողանամ քաղաք գամ,— հարց դրեց Բադալը:

— Գյուղում կընտրես, քաղաք գալու պետք չունես,— բացատրեց Պետիկը:

Բադալը հարցեր էր տալիս այսպես և շարունակ պրպտում էր, ստուգում, թե արդյո՞ք ապահովված է Կանոնադրության այս ու այն կետը: Նա այնպես էր շահագրգռված, որ կարծես մի ամբողջ երկիր պիտի ընտրի ինքը, և իր վրա է ծանրացած այդ ամբողջ աշխատանքը:

Հետզհետե զվարճանում էր Պետիկը Բադալի այս մանրազնին հարց ու փորձից, սպասելով, որ տեսնի, թե ինչով կվերջանա բանը: Ու սկսեց ավելի ծավալել.—

— «…ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, որոնք դարձել էն 18 տարեկան, անկախ ռասայական ու ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից…»:

— Հա՛, հա՛, հա՛,— գլխով էր անում Բադալը և խորասուզվում մտքերի մեջ:

— «…Յուրաքանչյուր ստանիցայում, գյուղում, ղշլաղում…»:

— «…Ոչ պակաս քան 50… ընտրողներով...»:

— «...Յուրաքանչյուր ընտրող քվեարկում է անձամբ… փակ ծրարով, գցելով քվեատուփի մեջ...»[3]:

Այսպես երկար բացատրեց Պետիկը, և Բադալը գլուխը կախ՝ ընկավ մտքերի ծովը:

Ըստ երևույթին նա հուզված էր: Էլ չէր լսում: Նրա մտքերն ուրիշ տեղ էին: Անցյալում…

Արագածն էր նրա, աշխարհը: Բայց ի՞նչ աշխարհ: Ձմեռը գալիս էր ու Բադալին քշում անշուք, ցուրտ գոմերը, ապրուստը պակասում էր, ձմեռն երկարում… Ձմեռն անցնում էր, սկսվում քոչը դեպի Արագած: Ինչ աչքը բաց էր արել Բադալը՝ իրեն տեսել էր կուլակի բատրակ. այնպես, կարծես մարդիկ իսկապես ծնվում են կուլակ ու բատրակ, և դա անդարձ է, անփոփոխելի, ինչպես հասակի բարձրությունը, մազերի գույնը, կամ Արագածը, որ կա ու մնում է միևնույն ձևով: Ծեծի, հայհոյանքի,

զրկանքի մեջ մեծացավ Բադալը՝ ինչպես քարի տակի խոտ՝ ծուռումուռ, մի կերպ, ճարահատ զուրկ… Քանի՜-քանի՜ անգամ են Բադալին ծեծել մինչև ուշաթափություն՝ գայլերի հափշտակած մի ոչխարի համար:

Նստում էր Բադալն Արագածի լանջերին և ժամերով նայում ներքև՝ դաշտավայրերին, բլուրներին, երկնքին: Ամեն բան անշարժ էր նրա աչքում: Կար կուլակը, նրա պաշտպան տերտերը, սրանց պաշտպան պրիստավը, թագավորը… Բայց զգում էր, որ այդ բոլորը մի օր փոխվելու է:

Եվ մի օր փուլ եկավ երկինքը, թագավորն ընկավ գետին, ոչնչացավ, նրա տակին էլ պրիստավը, կուլակը, տերտերը: Եկան քաղաքից նոր մարդիկ և Բադալենց գյուղի չքավորներին հավաքեցին հիմնեցին նոր աշխարհ: Բադալն այն օրից տեսավ, որ աշխարհը փոխվեց, շարժվեց, և սկսվեց նոր տնտեսություն, բերին տրակտոր, բաց արին դպրոց… Աշխարհն սկսեց պտտվել, կանգնած անիվը շուռ եկավ: Երկնքում երևացին պողպատե արծիվներ:

Եվ հովիվն սկսեց խոսել… խոսել չլսված խոսքեր, սկսեց գործել, խառնվել աշխարհքի ամեն տեսակ գործերին:

Այո, Բադալն էլ չի լսում Պետիկին— իր մտքերի հետ էր:

— Այսպես, Բադալ քեռի, էս է ընտրության Կանոնադրությունը:— Բադալը զարթնեց իր մտքերից, նայեց Պետիկին.

— Այ բալա՛մ,— ասաց նա, լցված և խանդակաթ ձայնով,— բալա ջան, էդպես մի՛ ասի: Ասա՝ ասել է թե՝ ամեն ազգ, ամեն լեզու, գիր իմացողը չիմացողը— ամե՛նքը, ամե՛նքը. ամե՛նքն իրավունքի տեր են, հավասար են: Ասա՝ էլ մեկ մարդ չկա, որ ձայնս խեղդի, ճամփիս քար գցի, իրավունքս խլի: Կընտրեմ ամենիցազնիվ մարդուն, ամենից պետքականին, չեմ ընտրի գողին, թամբալին:

Ասա՝ ասել է թե՝ ես էլ մարդ եմ, ես էլ կամ, երևում եմ գետնի երեսին: Այնքան տարի ապրել եմ էն անիծած հին աշխարհում, ինքս մեռած եմ եղել ու չեմ իմացել, որ հոգիս կենդանի է:

Այ, քսան տարի առաջ եկավ էս ազատությունը, ձեռքը դրեց հոգուս վրա, տաքացրեց ու հիմի թև է տալիս: Լավ էր կյանքներս, հիմիկուց դենն ավելի լավ կլինի, բալա ջան, աշխարհի դռներին դրած բոլոր կողպեքները ջարդվեցին:

Բադալը լռեց, բայց նրա հուզմունքը չէր հանդարտվել:

Պետիկը ծալում էր լրագիրը, ուզում էր գրպանը դնել:

— Բեր էդ օրենքը դնեմ ծոցս,— խնդրեց Բադալը,— շատ մուրազով եմ, որ ինքս իմ աչքով կարդամ, ամա չորանա՛ էն անիծված հին աշխարհի մոր մեջքը, որ իմ մեջքն էդ բանում կոտրեց: Բե՛ր, բե՛ր, կդնեմ ծոցս, ու սիրտս կկարդա:

Պետիկը տվեց լրագիրը: Բադալը ջերմ ձեռներով ծալեց լրագիրը, դրեց ծոցը, սրտի կողմը:

— Է՛, շա՛տ շնորհակալ եմ, Պետիկ ջան, շնո՛րհքդ ավելանա, մե՛ծ մարդ դառնաս,— օրհնեց ծերունի Բադալը՝ ձեռքը դրեց երիտասարդի ուսին:

Պետիկն ինքն էլ զգացվեց: Չէր սպասում այսպիսի դեպքի: Նա Է՛լ ավելի հասկացավ Կանոնադրության բուն իմաստը, որ սա բխում է ժողովրդական զանգվածների, աշխատավոր մարդու հոգու խորքերից: Կարծես Բադալը վաղուց էր ծանոթ այդ նվիրական դոկումենտին…

ԲԱԴԱԼԻ ՍԻՐՏԸ

(Էջ 162)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1937, N187: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 ՍՍՀՄ առաջին գումարման Գերագույն սովետի ընտրությունները տեղի ունեցան 1937 թ. դեկտեմբերի 12-ին: Դրանից առաջ մամուլում հրապարակվեց ընտրությունների կանոնադրությունը:

2 1936 թ. դեկտեմբերի 5-ին ՍՍՀՄ Սովետների VIII համագումարը հաստատեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը: Հայաստանը դարձավ միութենական հանրապետություն, իսկ 1937 թ. մարտի 23-ին Հայկ. ՍՍՀ IX արտակարգ համագումարը հաստատեց Հայկ. ՍՍՀ նոր սահմանադրությունը:

3 Հատվածներ են ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունների կանոնադրությունից: